




ՈՒԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻԼ 10.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀԵՐԹՈՒՄՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Հ. Մ. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑԻ

ՀԱՅՐԵՆԻՔ անուան ընտրույն 163.
64, 65, և 66. Թուոյ մէջ չարաւնա-
կեալ քննադատութիւն մի երեւեցաւ
Ս. Լ. Թուոյս տգարանէն իւրջս ըն-
ծայուած Ս. Վ. Սուրբատեանցի
Լիւեղեցական որոտմութեան վերայ.
Քննադատութեան ոճն ու լեզուն
արդէն մոտոնեց հեղինակը, որոյ ոգին
մեզ ծանօթ լինելով Թերեւս չը սո-
տախտանէինք, մանաւանդ որ քննա-
դատը տեղ տեղ ինքնին կը հերքէ իւր
խօսքերը, այլ քանզի իւր այդ գործով
ոմանց ստորագրուող գայթակղութիւն
առած կրնայ լինիլ, կը փութամք հեր-
քել յօդուտ հասարակութեան:

Յաւախ է որ Երչալուսոյ խմբա-
գիրն ալ հանդերձ իւր ծերութեամբը
տակաւին չը հասկցաւ որ կկրնն ու ա-
տելութիւնը մարդուս միտքը կը խա-
ւարեցնէ, և ողիզ դատողութիւնը
կը շփոթէ, ուստի Երժ. Ս. Վ.
Սուրբատեանցի վերայ, մասնաւոր ա-
տելութիւն ունենալուն համար փա-
թաղեր է այնպիսի գայթակղեցուցիչ
և անբարեպաշտ յօդուած մի իւր է-
ջերուն մէջ վերստին օրինակել, ասով
ալ գոհ չը լինելով իւր ատելութեան
կրից աննոցով խնդիրը ծանր կը տես-
նէ և քննադատութեան նիւթաւոր կամ
անհիմն վննեցոյ որոշումը ամենայն

Հայոց մեր^(*) Վ . Կաթողիկոսին և Ս . Սինդիկին կը թողու :

Անք կը յորդորեմք զնորին մեծապատուութիւնը որ շաճապարէ այդպէս . քանզի խնդիրն իւր կարծածին չափ ծանր չէ , այլ կրից փոշի մի է ան փորձ պատնիէ մի ցանուած : զոր ճըշ մարտութեան հողմը կը ցրուէ : Եթէ Արշալոյս մարդավարութեամբ և բըրխատոնէական զգացմամբ մոնէր իւր սրտի խորը , մաքրէր այն տեղէն տմեն աղտերն ու բիծերը և զգար բրխատունէութիւնը եւ ծանչնար Հայաստանեայց Եկեղեցին , յայնժամ ինքնին նոյն քննադատութեան անհիմն լինելուն որոշումը պիտի տար , և հարկ չպիտի մնար ամենայն Հայոց մեր Վ . Կաթողիկոսին և Ս . Սինդիկին գլխաւորութիւն տալ . որոց արդէն Եկեղեցական պատմութիւնը տպուած աւտեն օրինակ մի ղրկուած է և մէկ տարի եղած է , եթէ քննադատութեան հարկ տեսնուէր՝ մինչեւ ցարդ կը բըննադատուէր : Արդէն սոյն քննադատին այսպէս անժամանակ երեւոյլը կը յայտնէ որ ուղիղ հոգիէ թերադրուած չէ :

Նոյն իսկ Արշալոյս ալ գիտէ , որ ինքն ոմանց նախանձոտաց ամբաստանութեան պատճառաւ նկատողութիւն ըրած էր , և ժամանակին իրեն ալ ղրկուած է նոյն գիրքը որ տեսնէ թէ այն ամբաստանութիւններն հիմնաւոր էին թէ անհիմն :

Այնթէ Արշալոյս լուծեալ Արքիւսագի մը չափ ալ հաւատք չունէր . սպասանակի մի չափ ալ Հայ - Եկեղեցւոյ անդամ չէր որ այն ատենէն ցարդ գիտողութիւն մի չըրաւ և այժմ մինչեւ Սայր Աթոռոյ որոշման

յանձնելու չափ ծանր կը գտնէ . առկէց Արշալուսոյ ոգին ալ կը հասկըցուի :

Իսկ մեք 'ի շինութիւն գայթակղեալ մտքերու կրակոսանիմք կարծ 'ի կարծոյ հերքել . ընդ նմին և կը փութամք հանդարտութեամբ և եղբարական սիրով խրատել մեր քննարանը . կ'աղօթեմք մանաւանդ որ թերեւս ճշմարտութիւնը ծանչնալու համար լստուած ապաշխարութիւն տայ եւ սթափեցնէ զինքը սատանայի որդագայթներէն , յորոց բռնուած է իւր անհնազանդութեամբ եւ կոմսպաշտութեամբ :

Պ . քննադատը իւր անհմուտ եւ անբարեպաշտ խօսքերուն՝ ճշմարտութիւնը ստորուակ բռնելով կըսկսի և բռն խօսքին սկիզբէն իւր սգին կը յայտնէ . քանզի կերեւի թէ՛ լրագրաց նոյն գրքին փոքրիկ գովեստատալն ալ իրեն ծանր նստած է . նա մեծ զարմանօք ևս կը զարմանայ թէ ինչպէս մի քանի վարժապետք վայն կը գործածեն իբր ան սըխալ դասագիրք : Իայց խիտ մեծ պիտի լինի իւր զարմանքը , երբ գիտնայ որ կանխապէս այն գրքին ձեռագիրն արդէն ընդունուած կը դասախօսուէր բարձր արժարանի մի մէջ ընդ տեսչութեամբ բարձրաստիճան եւ քննելու բաւականութիւն ունեցող Եկեղեցականի մի :

Արեմն ըսել է թէ քննուած և օրինաւոր գտնուած է քանի որ այն աւտեն և այժմ ընդունուած է և դաս կը արուի :

Քննադատին այս յառաջաբանին մէջ ըրած բանաստեղծական ճիգերն մէկգի թողունք և անյնինք բռն խրեղոյն . այս տեղ միայն այսչափ ըսեմք , որ այսօր ալ Հայաստանեայց Կաթողիկէ Արարիկոս Եկեղեցին նոյն գրքալ իբր նոր զէնքով կը պատերազմի թէ էջունական թէ Պապական և թէ

(*) Չնք գիտէր թէ Արշալոյս այս հի բառն ինչու աւելցուցած է . . .

Իողորմական եկեղեցեաց ատելութե և աննորոգութե և մոլորութեանց դէմ. և թէ կը յանդիմանէ իւր ծոցոյն մէջ սնող և իւր հացիւն ապրող մեր քրն. նադատին նման խումբ մի դայթակ. ղեցուցիչ տկարամիտ զաւակները. հայրենասիրական և կրօնասիրական և ռանգեամբ կը խրատէ և կը կշտամբէ զանոնք, որք իբրեւ Հայ եւ իբրեւ անդամ եկեղեցւոյ չեն հնազանդիր Լիկեղեցւոյն, չեն ուզեր ծառայել, որոշեալ և սեպհական գործերէ խոյս կը տան. ինքնագլուխ և ազատ լինել կը կամին Լիկեղեցիէն, որ ծառայ լի նին իրենց կրից, մեղաց և մոլորութեց. որք ոչ միայն կը պատարակեն Լիկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեայները, այլ և կանարգեն ղերներ հոգեպէս ծնող Հայրերը և յրնչաց կը բերեն նոցա հայրական խրատները, կը մերժեն և զբայրութիւնը և ճշմարիտ ու բրիստոնէական բարեկամութեան սէրը. որք կը վրիպին չարաչար և ուղղուիլ չուզելով հանապաղ յանցանքէ ՚ի յանցանս կը թաւաղին: Եւ նոյն գրքով այսպէս շարունակ պատերազմելով իւր արիւնշուայ ծոցոյն մէջ միշտ պիտի պատասպարէ Հայ ազգութիւնը:

Թող սղմութեամբ կարգայ ամեն որ բովանդակ գիրքը և իմ ատածիս պիտի վկայէ. մանաւանդ 101 երեսէն մինչեւ 128 երեսը ուշի ուշով թող կարդան, ուր մեր քննադատն ալ իւր պատասխանը պիտի առնու սա խօսքերով « Իսկ վերջինը (քրիստոնէութեան վերջին պատերազմը)՝ ներքին էր. քերականութիւն քրիստոնէութենէ կամ վայրասպար հետազօտութենէ ծնունդ առած որ կը քայքայէր հաւատացելոց միութիւնը և հակառակութեամբ կը տկարացներ »:

Եւ թէ առանց հակառակութեան ոգիէն զրգուելու սիրով կարգա-

ցուի, նոյն գիրքը ծայրէ ՚ի ծայր լի է ՚ի նորատ քրիստոնէական եկեղեցւոյ խօսքերով. քրիստոնէական ըզգացմամբ կարգալու եւ տեսնելու է թէ ինչպէս Լիկեղեցին իւր վաճառութեամբ, որբութեամբ և անարատութեամբ կը ներկայանայ մեզ. և ճանչնալու է թէ ո՞րք են մեր սուրբ Հայրերը եւ նոցա գրուածներն ու վարդապետութիւնքը, յորոց ոչ յապաւուած, ոչ երկարած և ոչ չհաւնուած կայ, այլ՝ պատմական նկատողութիւն և գրուատ: Տեսնել պէտք է, որ նոյն գրքով հեղինակը ոչ նոր ու անկախ եկեղեցի երազող է, ոչ դադունի յարձակում կրնէ և ոչ ալ Լեւոն պայէն վարձեալ է:

Եւ որք մեք ևս ազատութիւն ունինք ատելութե, եւ թէ եւրոպայէն վարձեալ մի կայ, այն ալ մեր քննադատն է, որ առանց գիտնալու Հոյսատանեայց եկեղեցւոյ անկախութիւնը, իբր թէ արդէն ուրիշ Լիկեղեցիէ մը կախեալ է, ուստի անկախ Լիկեղեցի երազելը յանցանք է եղեր: Եւ նոյն գիրքը կը հաւտատէ որ Հոյսատանեայց սուրբ Լիկեղեցին նոր չէ, Հին է. կախեալ չէ ուրիշ Լիկեղեցիէ, այլ ԱնհԱն է. ուստի և նոյն գիրքը, ոչ շատ եւ ոչ քիչ բնաւ հակառակ չէ Հոյսատանեայց ուղղափառ սուրբ Լիկեղեցւոյ ուղիղ վարդապետութեան:

Սեր և զբայր քննադատը առաջին անգամ մկրտութեան խորհրդոյն վերայ խօսելով իւր խօստածքին ձեւով զգացումն և բարեպաշտ ոգի չունենալը կը յայտնէ. նա չը գիտէր որ քրիստոնէական Լիկեղեցին նիւթապաշտ չէ:

Յիսուս Քրիստոս հաւատացելոց մտքերը նիւթէն վեր բարձրացուց և ասոր համար էր որ Նիկիոյ եմոս վերջ տին ճննդեան խորհուրդը չէր հասկանար

Սեր Տէրը աստուածային խորհրդոյ՝ մարդկան մարերը հասաւ ընկելու համար արդարեւ խորհրդաւոր նիւթեր ներկայացուց, այլ ընդ նոքոր եղած փրկարար խորհրդոյ յառել սովբեցուց, յորում է փրկութիւնն՝ որպաւորեալ բանիւ և շնորհքն Աստուծոյ և ընկալեալ ՚ի մէջ հաւատովք։

Եկեղեցւոյ Ս. խորհուրդք, բառորում խորհուրդ, անշուշտ զգալի նշանաց վերայ կայացած են, որք անտեսանելի շնորհքը կը նշանակեն. ինչպէս են Աղբաւութեան ջուրը, Հաղորդութեան հացն ու գինին. Վրոշմի սուրբ Ալուօնը, Կարգի ձեռնադրութիւնը աղօթքներն ու օծումը. Ամուսնութեան պատկն և ուրիշ խորհրդաւոր արարողութիւնները. Ապաշխարութեան խոստովանութիւնն ու պարտաւորիչ սրտուէրները, և վերջին օծման մաղթանքներն ու սրշնութիւնները։ Սորա անտեսանելի չենորհաց տեսանելի և զգալի նշաններն են որք իրենց նշանակածները կը ներգործեն ՚ի մեզ ՚ի ձեռն հաւատաց եւ խնդրուածաց։ խորհուրդք Եկեղեցւոյ՝ զմեզ սրբող սուրբ բաներու նշաններ են, որք իրենց մէջ պարօշնակած ճշմարտութիւնը կը նշանակեն։ Ուրեմն բրիտանից հաւատքը նշանին ներքին փրկարար խորհրդոյն վերայ է, իսկ արտաքին նիւթը, ձեռն ու արարողութիւնն է առաջադրութիւն, միջոց, առիթ, օրինակ և նշան, որովք կը հրաւիրուի և կընդունուի աստուածային շնորհքն ու փրկութիւնը։ «խորհուրդն է տեսանելի կերպ, կամ եղանակ, կամ ձև կամ շեւս ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՇՆՈՐՀԱՅ»։ (()գոս.) «խորհուրդք Եկեղեցւոյ են ձեպք և արարողութիւնք ինչ Աստուծոյ սահմանեալք, յորս միջնորդութեամբ Ընդալի ՆԵՍՆԱԿՍՑ ցուցեալ եւ սու-

եալ լինի արժանապէս ընդունալոյ զօրութիւն և շնորհք աստուածային» (Սուլլանդ)։ «Իր ոչ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հողւոյ, ոչ կարէ մասնել յարքայութիւնն երկնից, զի այն որ զգեցեալ է զգեաւոր մահու, զսեփից և զապականութեան և ոչ երբէք առեալ է զանբուժական նշանն, օտարտուէ և անցաւոր. բանդի չունի դեմտանին արքանական . . . (Յոսիսն ոսկ)»։

Սեր կարեկցութեան արժանիքն նապատը երբ մարմնացաւք մարմնաւոր նիւթերու վերայ կը յառէ, և ՚ի նոցանէ միայն փրկութիւն կը բարձրէ, կը նշանակէ թէ չէ հասկցած տակաւին մաշտոցի միտաւթեան կանոնի մէջ յիշուած (նոգեաւոր ջուր)ը և Քրիստոսի ստած (՚ի Հոգւոյ ճնաւոր)ը։

Հաւատիկ յայտնի կերեւի որ Հայաստանեայց առաքելական ուղծ փառ սուրբ եկեղեցին եւս այսպէս կը հաւատայ, և փրկութիւնն ու շնորհքը Աստուծոյ կրտսանէ, որ նոքոր կը շնորհէ մեզ. ինչպէս որ նա ինքն քննադատն ալ մաշտոցի մէջէն վկայութիւն բերած մի հատուածովն կը հաստատէ առանց գիտնալու, թէ չնորհքք, մեղաց թողութիւնք, Սարբ Հոգւոյն ընդամենութիւնք և Հօր Վրաստոյ որդեգրիչը՝ Աստուծոյ կրտսանութիւն հաւատքով կը խնդրուի եւ կընդունուի։ Բայց քննադատը հակառակութեան և մոլորապարհ հետազոտութեան մէջ հաւատք կը սրտնէ, ուր գտնելք չունի, ինչպէս որ չքալին և « ոչ ինչ շահեցան որք այնպէս որն դնացին »։

Բարի հագիէ թերօգրուած չերեւիր մեր քննադատը երբ սա խօսքին մէջ աղանդաւորութիւն կը գտնէ. «Պատմական յիշատակարանք՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ նկատմամբ աւանդինն ունիչ չեն աւանդելք բրիտ-

տանէ ական ներքին սովորութեանց մասին 9 :

Եթէ այս խօսքը ազանդաւորութիւն է, ուրեմն ինքն ինչ կասէ . Եթէ Պ . քննադատը ինքզինք Հայ - Եկեղեցւոյ պաշտօնեայ կը համարի եւ եթէ նպատակը բարի էր, թող ցոյց տար պատմական յիշատակորանոց մէջ Հայաստանեայ Եկեղեցւոյ նըկատմամբ առանձին բան մը ըսուած, նորա քրիստոնէական ներքին սովորութեան մասին, որով մեծ ծառայութիւն արած պիտի լինէր իւր պաշտպանել կարծած եկեղեցւոյն եւ ազգին, եւ որովհետեւ ինքն եւս չք պիտի կարողանայ ցոյց տալ, ուրեմն գրքին հեղինակը բողոքականոց նպատաւոր ծառայութիւն արած չէ, այլ քրիստոնէական Եկեղեցւոյ նախնի վեճակը ստորադրած է ըստ իմաստից սուրբ դրոց եւ կարգադրութեան Եւրոպեաց, նոյն ժամանակի սովորութեանց համեմատ : Այս աւարելական սովորութիւնք Հայաստանեայ Եկեղեցւոյ մինչ ցարգ պահած լինէր գրքին հեղինակը քիչ մի վարը կը խոստովանի . բայց քննադատը այս տեղ տեսնել չուզէր որ ուրիշ տեղ հերքէ : Բայց դու, բարեպաշտ ընթերցող, տասնէ մտորամիտներու տուած թիւր բացատրութենէ մի գայթակղիր . այլ ուղիղ նկատէ եւ տես որ հեղինակի նոյն տեղի նկարագրութիւնը որչափ սուրբ եւ որչափ կենդանի է, որ կը պատկերացնէ մեզ նախնի քրիստոնէական եկեղեցւոյ ներքին հրեշտակային սուրբ ու խողաց կեանքը . այն ատեն պիտի դիտնաս որ պատմութիւն Պատմաթիւն է, Կրօնագիտութիւն չէ . Ըստուածաբանութիւն չէ . ոչ Մաշտոց է, ոչ ժամագիրք, ոչ շարական եւ ոչ այլ ինչ, բայց միայն պատմութիւն է . ինչ բան ու ինչ չտի որ

պատմութեան կը վերաբերի զոյն ու այնչափը պէտք է գրուի :

Պ . քննադատը Հաղորդութեան կենտրոն խորհրդոցն վերայ եւս խօսելով գրքին հեղինակը կը դատապարտէ . եւ որովհետեւ այս տեղ ալ խնդիրը բառի վրայ է, մեք ցոյց կը տամք որ բառը հաւաք չը դարձնենք :

Սեր նախնիք գործածէր են անխորտիր օրինակ, յիշատակ առաջադրու թիւն . նոյնպէս գոհութիւն տարք եւ այլ լըն բառեր, առանց երբէք խորհրդոց սրբարար զօրութեան վերայ տարակուսելու : Բայց ազանդաւորք նոյն բառերը չարաչար գործածէր են եղեր . նորա չեն հաւատար եղեր, մեզ ինչ փոյթ, նորա ըստ որում ազանդաւոր, հարկաւ չք պիտի հաւատան :

Բիւ խորհուրներէն ոմանք ազանդաւորաց անունը բողոքական լինելուն համար չէին ուղէր (բողոք) բառը խօսիլ կամ գրել . նորա տեղ ուրիշ բառ կը փնտռէին, ոմանք ալ (աւետարանական) ըսուելը հերետիկոսութիւն համարեցան . որ աստիճան տկարամիտ մղեռանդութիւն են ասոնք : Մինչեւ անգամ լսեցի յոմանց, որ գինի կամ օղի չը խմողները բողոքական կոնուանէին, ոմանք ալ կը գովէին բողոքականները հայհայութիւն չընելուն համար . այս կերպիւ թէ իրենք իրենց ընտիր բարեմասնութիւնները ոչոց կը յանձնեն, եւ թէ օտարաց կարծիք կը տան թէ իրենց եկեղեցին կը թշուառէ այգովսի մտրութեանց, եւ ահա այս է կատարեալ ազիտութիւն . ուրկէ յառաջ եկած է եւ կուգայ այնքան սրտակոտորմներ Բառերու եւ նիւթերու նային էր, որ մինչ ցարգ քրիստոնէական Եկեղեցին այսքան տառապեցուց եւ պիտի տառապեցնէ դեռ :

Եթէ մեր քննադատին արածը հաւատարմութիւն չէ եւ եթէ իրօք դր-

քին հեղինակը աղանդաւոր կը համարի, Ս. խորհրդոց օրինակ, նշան, և արարողութիւն անուններ տալուն համար, չը գիտեմք ինչ պիտի համարի Հայաստանեայց Եկեղեցւոյ Սրբազան Հայրապետ սքանչելին Սահակը, որ այսպէս կը խօսի, «Եւ հաստատեալ կայ ՚ի նոսա. (յեկեղեցիս) տէրունական սեղանն, յորոյ վերայ ԶԶԱՅՆ եւ ԶԳԻՆԻՆ պատարագեմք, ՅՕՐԻՆԱԿ կենդանարար մարմնոյ եւ արեանն Վրիստոսի, որ միշտ անծախապէս բաշխի ՚ի մեզ, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղացոյ: Հայոց Հայրապետը յօրինակ լինելն ալ կը խոստովանի, քաւիչ զօրութեանն ալ կը հաւատայ, մեր քննադատը ինչպէս կրնայ դատել հեղինակի սիրտը և ինչու կը գայթակղի նորա յօրինակ բառէն:

Սեր քննադատը որչափ յառաջ գնայ այնչափ կը մոլորի, և այնչափ կը կուրնայ, որ Եկեղեցւոյ խորհրդոց առաքելական լինելը կուրանայ. «Կը զարմանամ արդարեւ, կառէ նա, թէ գրքիս հեղինակը ինչու եկեղեցւոյ դաւանութիւնքն այսքան տարբեր կը բացատրէ, ինչու սուրբ խորհուրդքը ՚ի նշան բացատրելով առաքելական սովորութիւնք նկատել տալու այսքան կը ճգնի»: Կեցցէ Պ. քննադատը որ իւր եկեղեցւոյ խորհուրդներուն առաքելական լինելն ալ չը գիտէր. աւսէք որչափ պժգալի է կամակորութիւնը. . . . Իայց եթէ ըսէ որ ինքն այդ խօսքով դրոշմն ակնարկել ուղած է, լաւ, մեք եւս կը հաստատեմք, որ ինքն աւելի մը վերը թէեւ առանց նշան բառն արտասանելու նշան լինելը կը դաւանի, ասելով, «Իայց այն ատեն այժմու պէս դրոշմով կնքուիլ չը կար, այլ հաւատացեալք Եւաքելոց ձեռնադրութեամբ ու աղօթիւրը

կ'ընդունէին զՀոգին Սուրբ: Սուրբ Եկեղեցին եւս Եւաքելոց անտի այնպէս դաւանելով կը հաւատայ և օծութեամբ ու աղօթքով կը կատարէր: Եւս խօսքերը քննադատին են. ընթերցող լաւ խորհէ. . . .

- Եկեղեցին ինչ բանի կ'հաւատայ:
- Ս. Հոգւոյն ընդունելութեանը:
- Ինչ բանով:
- Վրոշմով:

- Ուրեմն դրոշմը Սուրբ Հոգին ընդունելու նշանը կը լինի, որով երախայն կը զօրանայ և կը զինուորի Վրիստոսի: Եւս առանց բառի եւս նոյն խօսքը կ'ըսուի, ուրեմն յանցանքը բառին է, ոչ, այլ կրից. այլ կամ մատաղտութեան:

Վննադատին վերոյգրեալ խօսքէն սա եւս կը հասկանամք որ Սուրբ Եկեղեցին այսօր բան մի այնպիսի կերպիւ կը կոտարէ, որ Եւաքելոց ժամանակ ուրիշ կերպիւ կը կատարուէր, ինչու ուրեմն գրքին Հեղինակը բողոքականաց ծառայութիւն ըրած պիտի լինի, (Հայաստանեայց սուրբ Եկեղեցին առաջին շրջանին մէջ առաքելական սովորութեամբ կը վարուէր) ըսելուն համար: Կը տեսնէք որ մեր քննադատը իւր խօսքովը կը դատուի, Հ. Ս. Վ. Սուրատեանցի չառածը սա կը վճռէ, ինչու ուրեմն Եւաքելոց արարեալն կը լինի և Սա ոչ. . . . Եւս ոչ բարխարտութիւն է, ոչ քրիստոնէութիւն է և ոչ ալ ճշմարտութեան հոգիէն յառաջ եկած է:

Երժանապատիւ Հայր Սեդեկիսէդ Վ. Սուրատեանցի Եկեղեցական պատմութիւնը երբեք ճշմարիտ ու բարեպաշտ քրիստոնէի գայթակղութիւն չը լինիր, այլ «Եւսաներն ու յողորդները կը կամակորեն իրենց անձին կորստեան համար»: Սեր քննադատը փոխանակ չը գիտցածը բըն

նելու, երանի՜ թէ ինքզինք քննէր եւ չուտով ապաշխարութեան դառնար, որպէս զե. քառութիւնը նորանոր յանցանքս եւ եւս չը դժուարանար:

Դառնամք մեր խօսքին. Պ. քննադատը սարկաւագութենէ լուծուած լինելուն համար մուսցեր է որ խորհրդատեորին մէջ եւս քանի մի տեղ յիշատակ, առաջագրութիւն, Հայ, գինի եւ բաժակ բառերն յիշուած են. արդեօք ասոնցմէ եւս գայթակղե՞ր է, եթէ չէ գայթակղիր թող ասկէց ալ չը գայթակղի:

Գրքին Հեղինակը «Լոյսարց հետ հաշտուիլ եւ ապա գոհութեան հացը բեկանել», ասելուն համար դատուած է մեր քննադատէն, իբր թէ բողոքականաց այժմու դրութիւնը կակնարկէ. — ինչո՞ւ: — վասն զի սքեա, (բողոքականք) նախ կը գոհանան եւ ապա կը ճաշակեն, եղբ: Սէր եւս եղբայրական սիրով կը յորդորեմք վնիքը որ Սուրբ Ըւետարանի մէջ Տեառն մերոյ նոյն կենարար խորհրդոյ աւանդած տեղը քանի մի անգամ կարգայ. ուր պիտի տեսնէ, որ Յիսուս եւս հացը կառնու, նախ կը գոհանայ կը բեկանէ, եւ ապա աշակերտաց կը տայ ու տնջու. նոյնպէս եւ բաժակը առնելով նախ կը գոհանայ, ապա կը խմէ եւ աշակերտաց կը տայ խմելու:

Բայց մեր քննադատը ի՞նչ պիտի ասէ արդեօք, երբ գիտնայ թէ Հայաստանեայց Սուրբ Լիկեղեցին եւս 'ի Քրիստոսէ ուսեալ կենարար խորհուրդը ճաշակելէ յառաջ կը գոհանայ եւ ապա կը ճաշակէ. եւ այն միջոցին անգամ անխորարար հաց եւ բաժակ կանուանէ եւ բողոքական եղած չը լինիր: Բայց եւս տարակուսած եմ չը գիտեմ թէ որմէ գէ՞մ է իմ խօսքս, կատարեալ Քրիստոնէի, թէ Լիւթանայի, Հայո՞ւ, թէ Օտարագգւոյ. քանզի ոչ քրիստո-

նելութիւն գիտէ եւ ոչ Հայ — Լիկեղեցին կը ճանաչէ, ասանկ մարդուն ի՞նչ խօսելու եւ ինչ հասկացնելու է. ասանկներուն համար է անշուշտ Ըւետարանի սա խօսքերը, «Սարգ.ք ապականեալք մտօք. յամենայն ժամ ուսանին եւ երբէք 'ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին. որք ոչ երբէք եկեցցեն 'ի լաւ անդր, մտրեալք եւ մոլորեցուցանիցին, այլ դու խորշեցի՞ր 'ի նոյսնէ»:

Քրիստոնէական եկեղեցւոյ նախնի Ս. Հարք անխտիր գործածեր են իբր նուիրական բառեր նշան, յիշատակ, հաց, գինի, օրինակ, ջուր, իւղ, մեռ օն, բառերը, եւ կը խոստովանին որ Լիկեղեցւոյ խորհուրդք ըստ արտաքին կատարման իրենց նշանական ներքին շնորհաց արտաքին նշաններն են. համայն եւ այնպէս խորհրդոյ՝ փրկագործութիւն մատակարարելն ալ կը խոստովանին եւ ամենայն ջերմեռանդութեամբ կը հաւատան. զոր օրինակ «Բնդ տեսակաւ հացի տրուեալ լինի բեզ մարմին եւ բնդ տեսակաւ գինւոյ տուեալ լինի արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: «Ըրդ՝ սովորութիւն ունիմք զսոյն հաց միշտ 'ի վառս եւ 'ի յիշատակ Քրիստոսի օրհնել... Քանզի զեղման 'ի վերայ մեր փրկչին շնորհաց՝ տուան յիշատակք, գոհութիւնս աւրք, եւ մեռնն սրբարար, տօնք տէրունականք եւ այլն... Ըպա եթէ յայլեզանէ ('ի հաւատոյ եւ 'ի սիրոյ) կատարողքն վրիպին, զինչ եւ գործեն՝ 'ի նանիր դանգաշեն. զի նա ոչ թէ 'ի տարրն հայե կամ 'ի նիւթըն՝ աննիւթն բնութիւն, այլ 'ի հօգին եւ 'ի սէրն՝ որով տարրն ընծայի: Օ՛ի 'ի Քրիստոս Յիսուս, ասէ առաքեալն Պաւղոս, ոչ այլ ինչ՝ բայց միայն հաւատք սիրով յաջողեալք... Գինին՝ նոր ուխտին արեան յիշատակ:

Ըրդ որպէս դժողբեալ արտակերն ոչ է կենդանի և ոչ կենդանացուցանել ունի զօրութիւն, այսպէս և սա թէ լոկ օրինակ էր, ոչ ինքն կենդանի և ոչ զայլս օրբէր: (Լամբր):

Լհաւաթիկ այս ամեն խօսքերէն յայտնի է որ լոկ բաւերու և նիւթե լու չընայիր ճշմարիտ հաւատացեալք, այլ հաւատով և սիրով նորա ներքին ճշմարտութեան և հոգւոյն:

Ճշմարիտ հաւատացեալն ինչո՞ւ պիտի գայ թափել այն բառերէն զորանախ նիր հաւատով արտասանեցին, բարեզնցին, մեղ աւանդեցին և նոյն հաւատաւուն հաւատարմով մեռան: Սիթէ ճշմարիտ քրիստոնէայն չը գիտէր, որ ի յաւաթիկն եւ ի թողութիւն դաւանածք մի գերադոյն բան է, մի անհաւ խորհուրդ է և արքայործութի կամօք և բաւին Եփեսոսի սրուն թէ բողոքականք չէն հաւատարմ կը նշանակէ թէ Եփեսոսի խօսքին և կամքին ոչ արժէք և ոչ հաւատք կընծայեն, թէ աւետարանը չէն հասկանար, թէ ուրիշ նշանակում մը ունին, թէ . . . ինչ և ինչէ, մեղ ինչ փոյթ, անոնց համար մեր աւանդութիւնքէն, մեր հաւատարմութիւնք, պատմութիւն խորհրդութիւնք, քան լիցի, նորա ինչ կուզեն թող աւսեն, մենք մերը պինդ թող բռնենք, չերկր է այդ յիմարութիւնը, հերկք է որ մինեւ ցարդ ատալ ինչեր կուտինք:

Սիթէ մեր չմը կարգար Լաւբերցն աւ Կրօնթացիս գրածը, ուր չայ և օրհնութիւն բաժակ կանուանէ, բայց և օրանելի կերպիւ նորա փրկագործութիւնը կուսուցանէ: Ըրդ քանի որ Լաւբերալը օրհնութեան բաժակ, բեկումն հացի և այլն կուտէ, ինչո՞ւ մեր քննադատը Սուրբատանցի բառերէն կը խրաչի:

Յիշատի ևս կը ցաւիմ և կը դար-

մանամ միանգամայն ակննկով մարդ մի, որ կրկն յորձանքին առջեւ խնամ այսպէս քարէ քար կը դարձուի:

Եկեղեցւոյ ծառայիչ չուղղ և շատախօսութիւն, քանն ու կիրքը պաշտել ուղղ մեր քննադատը այժմ էլ իւր բարեպաշտ կը ձեւանայ և իւր կիրքն յագեցնելու համար յանդիման զգտնելով խեղճ փէթիսկարութեամբ բարեքամ երկր (կրօնքիս հայկոյնց կը պառօց, բայց իւր խօսքերը կը յայտնեն, որ ինքը ոչ բարեպաշտ է և ոչ ալ կը բժնական ակնածութիւն և երկիւղածութիւն ունի. վասն զի եթէ ունենար, այսպէս խորհական ձեւերով և անհմտութեամբ խորհողոց քննութիւն չը պիտի մանէր խորհուրդք մեր և հաւատք կը պահանջեն և ոչ թէ խօսք ինչպէս կը խօսի Վաթրոնացիս Վիսի իսա (ի խորհուրդ սուրբ պատարագին) հաւանէ միայն հաւատ և տափու մն և ոչ թէ յողուած բանի և օրինակացու թէ մեր քննադատը ճշմարտութիւնը սիրէր, եթէ այլ իմն ուղղ թէ լողում թեան չանար, դէ՞մ պիտի յիշէր որ չ. Սուրբատանցի շարագրած Եկեղեցական պատմութիւնը պատմութիւն էր և ոչ կրօնագիտութիւն և այլն:

Պէտք է յիշէր որ Եկեղեցական պատմութիւնը դասագիրք լինելով դոյն կարգացող աշակերտը արդէն չին ու Լոր Կաակարանի պատմութիւն և կրօնագիտութիւն կարգացած տիտի լինի. ուստի իրեւ յաջորդ դասագիրք, հարկ չը կար կրօնական նիւթոց սահմանին և նշանակութեանց վերայ երկար խօսիլ, զորս արդէն ուրիշ դասագրքերով ուսուցած էր, այլ իւր պատմութիւն ժամանակին եղածներն յիշել հարկ էր և այնպէս արած է:

Սէր քննադատը անպարտիւն բա-

«էն ալ կը գտնուի ինչ
յողդողդ հաւանք, որ ամեն հողմէ
կը շարժի: Անք գիտեմք որ օրէնքն
անգամ երկար սովորութեամբ հաս-
տատութիւն կը գտնէ: Այլէ առանց
հեղինակի անուշագրութեամբ գրա-
ցած սովորութիւնը, այլ է գերագոյն
հեղինակէ մի ոկիւղն առած: Ընդու-
նուած և յաճախ կրկնութեամբ եր-
կար դարերով սովորութիւն եղած
քան մի, Լիկեղեցական պատմութեան
Հեղինակը իւր գրքով կընդունի որ
Լիկեղեցւոյ խորհուրդներն Հայաստա-
նեայց եկեղեցին ի Բրիտանիա և Ղա-
թաքէլոյ անախ ուսած, և նոյնը սո-
վորութեամբ, յարատեւ կատարե-
լով մինչեւ ցարդ հասուցած է, ու-
րեմն Պ. քննադատը Թող քիչ մի
խորհի գիտնալու համար Թէ ինքն ինչ
մղորութեանց մէջ ինկած է. և նախ
քան զայլ՝ ինքզինք Թող դատէ կամ
ճշմարիտ բարեկամի մը դատաստա-
նին ենթարկէ իւր անձը:

Ըմբռնութեան համար քննադա-
տին գիտցածէն աւելին ըսուած է նոյն
գրքին մէջ, նմանապէս ձեռնագրու-
թեան և վերջին օժման համար անկէ
աւելին ասելոյ կարեւորութիւն չը
կար: Պ. քննադատը վերջին օժման
համար խօսած ատենն ալ կը խոստովա-
նի որ ազգաց սովորութիւնք այժմ քիչ
չատ կը տարբերին առաքելոց սովո-
րութենէն, որով իւր խօսքին համե-
մատ ինքզինք կը դատապարտէ իր
բողոքական. քանզի ասել է, որ կար-
ժամանակ մի որ այժմեանէն տարբեր,
այսինքն Առաքելական սովորութեամբ
կը փարուէր Լիկեղեցին:

Այս համառօտ բացատրութիւն
ներէն և օրինակներէն կ'երեւի յայտ-
նուելու որ Հայաստանեայց Լիկեղեցւոյն
հակառակ չէ Սեւ քիսեղեկ Վ. Սուրա-
տեանցի Լիկեղեցական պատմութիւնը,

զոր ճշմարիտ Հայն իւր հաւատոյ հաս-
տատութեամբն արդէն ձեռագիրը
կարգացեր ընդունելու և (կարծեմ ա-
ռանց հեղինակին իսկ գիտութեան)
դպրոցին մէջ դասախօսած էր, իսկ չը-
կամ Հայը զայն խմբեցու ելերէ. և
ինչ հոգ, միթէ այն կենաց Վիպը,
այն սրբութեան և աստուածանմա-
նութեան առաջնորդող Ս. Լեւոնա-
րանը չարաչար չը մեկնեցին մարդիկ,
և միթէ նորա պայծառութիւնը ա-
ղարակցան, քան լիցի, այլ առաւել
պայծառ փայլեցաւ և տարածեցաւ,
քանզի ճշմարտութիւնը չը ծածկուիր:

Պ. քննադատը ինքն ալ գիտէ որ
Սեւ քիսեղեկ Վ. Սուրատեանցը ա-
պաշխարութեան խորհրդոյ ինչ լինե-
լը և որչափ կարեւոր լինելը կը հաս-
կանայ, եւ կուսուցանէ. բայց ինքն
փոխանակ նորա գրքին մէջ որոնելու,
Թող իւր սրտին մէջ որոնէ եւ եթէ
ինքն ճշմարտութեամբ կզգայ անբա-
խարութեան կարեւորութիւնը, պէտք
էր մինչեւ ցարդ շուտով ապաշխա-
րէր, քանզի ինքն չատ կարօտ է այդ
կենսաւէտ դեղին:

Սեւ այսչափ բաւ համարելով
կը խրատեմք զինքը եղբայրական սիրով
որ յանցանք յանցանաց վերայ չը բար-
դէ. քանզի ատով մարդ չարդարանար,
այլ յանցանքն զգալով, ճանչնալով,
զղջալով և ապաշխարելով:

Վր վերջացնեմք խօսքերնիս Աստու-
ծոյ շնորհքը մաղթելով իրեն համար: